ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՁԼՄ-ՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Երեւան
2007

Հայաստանում ինքնակարգավորման գործընթացներին վերաբերող առաջին գրքույկը՝ «Ինքնակարգավորում. միջազգային փորձն ու հեռանկարները Հայաստանում» վերնագրով, ԵՄԱ-ն հրատարակել է 2004 թվականին: Անցած տարիներին շարունակվել են հայկական ԶԼՄ-ներին եւ լրագրողներին պրոֆեսիոնալ սկզբունքների շուրջ համախմբելու ուղղությամբ աշխատանքները: Գործընթացները որոշ հանգրվանի հասան 2007 թվականի մարտի 10-ին, երբ Հայաստանի 18 լրատվամիջոցներ ստորագրեցին միասնական Վարքականոն եւ ընտրեցին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմին:

Այս գրքույկը ներկայացնում է 2007 թվականի հունվարից մինչեւ դեկտեմբեր Հայաստանում ԶԼՄ-ների ինքնակարգավորման ասպարեզում իրականացված առաջին կոնկրետ քայլերը, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի գործունեությունը, ինչպես նաեւ՝ մի քանի ԶԼՄ-ների դեմ բողոքների վերաբերյալ Դիտորդ մարմնի եզրակացությունները:

Գրքույկի հրատարակությունը ֆինանսավորել է Բաց հասարակության ինստիտուտը:

Ծրագրի ղեկավար՝ **Բորիս Նավասարդյան**
Խմբագիր՝ **Մեսրոպ Հարությունյան**
Համակարգչային էջադրումը՝ **Նարա Մենդելյանի**

ՆԱԽԱԲԱՆ

2007 թվականի հունվարի 9-ին Երեւանի մամուլի ակումբը կոչ ուղղեց Հայաստանի լրագրողական հանրությանը՝ առաջարկելով միասին մշակել պրոֆեսիոնալ էթիկայի նորմեր: Կոչում ասված էր. «Երեւանի մամուլի ակումբը, գործընկեր լրագրողական կազմակերպությունների հետ, նախաձեռնում է մշակելու Հայաստանի որակյալ լրատվամիջոցներին միավորող պրոֆեսիոնալ էթիկայի հիմնարար նորմեր: Մեր ցանկությունն է, որ այդ նորմերը ընդունելի լինեն հնարավորինս շատ լրատվամիջոցների ու լրագրողների համար եւ կիրառվեն նրանց կողմից՝ իրենց ամենօրյա գործունեության ընթացքում: Նման մի փաստաթղթի անհրաժեշտությունը հատկապես կարեւոր է այժմ՝ սպասվող խորհրդարանական ընտրություններից առաջ:

Բոլոր այն լրատվամիջոցներին, որոնք պատրաստ են մասնակցելու էթիկայի նորմերի մշակմանը, իսկ հետագայում՝ հետեւելու դրանց, հրավիրում ենք համագործակցության»:

Նախաձեռնությանը միանալու ժամկետը սկզբնապես հայտարարված էր հունվարի 20-ը, սակայն գործընթացը բաց էր, եւ ցանկացողները դրան կարող էին միանալ իրականացման որեւէ փուլում:

Փետրվարի 2-ին կայացավ ԵՄԱ նախաձեռնությանն աջակցող 20 ՁԼՄ-ների, 8 մասնագիտական միավորումների ներկայացուցիչների առաջին հավաքը: Հավաքին մասնակցում էին նաեւ նախաձեռնությանն անհատապես աջակցող երեք լրագրողներ: Այս առաջին հավաքի ժամանակ ձեւավորվեց աշխատանքային խումբ, որը պետք է մշակեր ՁԼՄ-ների էթիկայի վարքականոնի հիմնական սկզբունքները:

Փետրվարի ընթացքում աշխատանքային խումբը երեք նիստերի ընթացքում մշակեց Վարքականոնի եւ դրա հավելվածի՝ ընտրությունների եւ հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ Հռչակագրի նախագծերը: Աշխատանքային խմբի մարտի 5-ի նիստում քննարկվեցին ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի ընտրությանն առնչվող կազմակերպական հարցեր:

2007 թվականի մարտի 10-ին Երեւանի մամուլի ակումբում տեղի ունեցավ ՁԼՄ ինքնակարգավորման ԵՄԱ նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների եւ լրագրողական կազմակերպությունների ղեկավարների հավաքը, որում ընդունվեցին աշխատանքային խմբի մշակած ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ, դրան կից հավելվածը՝ ընտրությունների եւ հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ Հռչակագիրը եւ ընտրվեց ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ, որի առաքելությունն է Վարքականոնի խախտումների վերաբերյալ դիմում-բողոքների քննարկումն ու դրանց վերաբերյալ եզրակացություններ կայացնելը: Նախաձեռնությանը միացած եւ Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցը պարտավոր է Դիտորդ մարմնի եզրակացությունը հրապարակել իր իսկ էջերում (եթերում):

Հավաքին ներկա եւ Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցների ցանկը (այբբենական կարգով)

1. **«Ա1+» ՀԸ**
2. **«Ազգ» օրաթերթ**
3. **«Առավոտ» օրաթերթ**
4. **«Արմինֆո» լրատվական գործակալություն**
5. **«Գալա» ՀԸ (Գյումրի)**
6. **«Դելովոյ էքսպրես» թերթ**
7. **«Լոռի» ՀԸ (Վանաձոր)**
8. **«Lragir.am» էլեկտրոնային թերթ**
9. **«Կումայրի» թերթ (Գյումրի)**
10. **«Հայկական երկրորդ հեռուստաալիք»**
11. **«Մեդիա սթայլ» ընկերակցություն**
12. **«Ռադիո Հայ» ՌԿ**
13. **«Սոսի» ՀԸ (Կապան)**
14. **«Ցայգ» ՀԸ (Գյումրի)**
15. **«Քաղաքացիական նախաձեռնություն» թերթ (Վանաձոր)**

Հավաքից երկու օր անց Վարքականոնը ստորագրեցին նաեւ նախաձեռնությանը միացած հետեւյալ լրատվամիջոցները՝

16. «Երկիր մեդիա» ՀԸ
17. «Միգ» ՀԸ (Վանաձոր)
18. «Ռեգնում» ԼԳ Անդրկովկասյան խմբագրություն
19. «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթ
20. «168 ժամ» թերթ

Բացի վերոհիշյալ լրատվամիջոցներից հավաքին ներկա էին եւ ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի ընտրությանը մասնակցեցին Երեւանի մամուլի ակումբի, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի, Հայաստանի ժուռնալիստների միության, Մամուլի աջակցության «Ինտերնյուս» ՀԿ-ի, Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբի եւ Վանաձորի մամուլի ակումբի ղեկավարները:

Հավաքն ընտրեց լրատվամիջոցների եւ հասարակայնության ներկայացուցիչներից կազմված 7 հոգանոց Դիտորդ մարմին ***(Դիտորդ մարմնի կազմը տես՝ էջ 10)***:

Հավաքը հաստատեց նաեւ Դիտորդ մարմնի աշխատակարգը:

***

Վարքականոնը բաց էր ստորագրման համար, եւ մինչեւ 2007 թվականի դեկտեմբերի 1-ը այն ստորագրեցին եւս 11 լրատվամիջոցներ: Դրանք են.

21. «Աբովյան» ՀԸ, (Աբովյան)
22. «Ալտ» ՀԸ, (Արմավիր)
23. «Անկյուն գումարած 3» ՀԸ (Ալավերդի)
24. «Բան ու գործ» թերթ, (Գորիս)
25. «Դեմո» թերթ (Ստեփանակերտ, ԼՂՀ)
26. «Լոռու մարզ» թերթ, (Վանաձոր)
27. «Սեւան» թերթ, (Սեւան)
28. «Տեսանկյուն» թերթ, (Նոյեմբերյան)
29. «Քամուտ» ՀԸ, (Նոյեմբերյան)
30. Karabakh-open.com ինտերնետային հրատարակություն (ԼՂՀ)
31. STV1 ՀԸ, (Սեւան)

Այսպիսով, 2007 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Վարքականոնը ստորագրել են Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի 31 լրատվամիջոցներ:

ՎԱՐՔԱԿԱՆՈՆ

Մենք՝ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներս

- գիտակցելով մասնագիտական վարքի կանոններին հետեւելու եւ դրա շուրջ համախմբվելու անհրաժեշտությունն ու հնարավորինս բարձր աշխատանքային եւ բարոյական չափանիշներ պահպանելու լրագրողների պարտավորությունը,

- ընդգծելով հանրության տեղեկացված լինելու իրավունքը եւ տեղեկացնելու ԶԼՄ-ների պարտականությունը,

- մատնանշելով խմբագրական անկախության պաշտպանության եւ որեւէ մասնավոր շահով լրագրողներին չկաշկանդելու անհրաժեշտությունը,

- ընդունելով, որ ԶԼՄ-ներն ու լրագրողները հաշվետու են իրենց լսարանի եւ միմյանց առջեւ,

- արձանագրելով, որ հնարավոր չէ բոլոր դեպքերի համար սահմանել միասնական կանոններ, սակայն կարելի է եւ հնարավոր է պահպանել պրոֆեսիոնալ լրագրության համընդհանուր չափանիշները,

ընդունում ենք հետեւյալ սկզբունքներն ու դրանցից բխող պարտավորությունները

1. Ճշգրտություն եւ անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

1.1. մինչ հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.2 եթե խմբագրությունը հասարակական նշանակալի տեղեկություններ է ստացել, սակայն չի կարողացել ճշտել փաստերը, հրապարակելիս անպայման նշել այդ մասին,

1.3. վերլուծություններ եւ մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի վրա,

1.4. հստակ սահմանազատել փաստերի եւ տեղեկությունների շարադրանքը կարծիքներից, վերլուծություններից ու մեկնաբանություններից,

1.5. ձգտել, որ վերնագրերը, հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս,

1.6. չաղավաղել լուսանկարային կամ տեսագրված նյութի բովանդակությունը, լուսանկարներում եւ տեսանյութերում տեխնիկական հնարքներ կիրառելու եւ միջամտությունների դեպքում անպայման նշել այդ մասին:

2. Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

2.1. հնարավորինս նշել տեղեկությունների աղբյուրները,

2.2. հնարավորինս խուսափել տեղեկատվության կոնֆիդենցիալ աղբյուրներ օգտագործելուց, լրատվության աղբյուրը գաղտնի պահելու խոստումից առաջ միշտ պարզել շարժառիթները, սակայն եթե տեղեկությունն այնուամենայնիվ տրվում է աղբյուրի գաղտնիության պայմանով, որեւէ պարագայում չբացահայտել այն,

2.3. խուսափել տեղեկությունների ձեռքբերման ծածուկ եւ գաղտնի մեթոդներից, բացառությամբ այն դեպքերի, երբ ավանդական բաց մեթոդները չեն ապահովում հասարակական շահերից բխող տեղեկությունների ստացումը: Այսպիսի մեթոդների կիրառման անհրաժեշտությունը պետք է բացատրվի բուն հրապարակման մեջ,

2.4. հարգել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը, մեջբերումներ եւ արտատպություններ կատարելիս նշել աղբյուրները:

3. Խմբագրական անկախություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

3.1. հստակ սահմանազատել լրագրողական նյութերը գովազդից. յուրաքանչյուր հրապարակում, որի դիմաց վճարվել է, պետք է այդ մասին նշում ունենա,

3.2. խմբագրական լուսաբանումներում գովազդատուներին ու հովանավորներին արտոնություններ չտալ,

3.3. դիմակայել իրադարձությունների լուսաբանման վրա ազդելու նպատակով գովազդատուների, հովանավորների, ՁԼՄ սեփականատերերի գործադրած ճնշումներին,

3.4. հրաժարվել տեղեկություններ հրապարակելու կամ չհրապարակելու համար խոստացվող վճարներից, նվերներից, ինչը մասնագիտական անկախության հետ հակասության մեջ է մտնում եւ հանգեցնում է վստահության կորստի:

4. Հարգանք մարդկանց անձնական կյանքի եւ այլ իրավունքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

4.1. հարգել եւ պաշտպանել մարդկանց անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը. հասարակական անհրաժեշտությամբ կարող է արդարացվել միայն պաշտոնատար անձանց, հասարակական գործիչների, իշխանության կամ հասարակական ուշադրության ձգտող մարդկանց անձնական կյանքին միջամտությունը,

4.2. այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը եւ պատասխանատվություն է կրում իր վճռի համար,

4.3. առանձնապես նրբանկատ լինել, երբ տեղեկատվության աղբյուրները կամ հրապարակումների հերոսները երեխաներ, անչափահասներ են: Զգույշ լինել դեռահաս ամբաստանյալների, ինչպես նաեւ սեռական հանցագործությունների զոհերի, ***ինքնասպանություն գործած անձանց (փոփոխություն՝ Ծաղկաձորում կայացած հավաքում, 10. 11. 2007 թ.)*** ինքնությունը բացահայտելիս,

4.4. ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ,

4.5. պահպանել անմեղության կանխավարկածը. մինչեւ դատաքննությունը հանցագործության մեջ կասկածվողների անունները հրապարակելիս քննարկել դրա հասարակական անհրաժեշտությունը՝ հավասարակշռություն պահպանելով անմեղության կանխավարկածի, հանցագործության մեջ կասկածվողների՝ արդար դատաստանի իրավունքի եւ հասարակության՝ տեղեկացված լինելու իրավունքի միջեւ:

5. Հարգանք զանազան խմբերի ներկայացուցիչների եւ համամարդկային արժեքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

5.1. խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով,

5.2. որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն,

5.3. որեւէ ձեւով չքարոզել բռնություն, պոռնոգրաֆիա, պատերազմ,

5.4. զգույշ լինել ահաբեկչական գործողությունների վերաբերյալ տեղեկություններ տարածելիս, բացառել ահաբեկիչների նկատմամբ համակրանք առաջացնող սյուժեները եւ հաղորդագրությունները, նրբանկատ լինել իրադարձությունների ականատեսների՝ իբրեւ տեղեկատվության աղբյուրների նկատմամբ, խուսափել պատանդների եւ հնարավոր զոհերի հարազատների եւ ընկերների բացահայտումից՝ առանց իրենց համաձայնության:

6. Ազնվություն հանրության հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է՝

6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու եւ պատասխանի հնարավորություն ընձեռելու այն անձանց, ում հասցեին մեղադրանքներ են եղել հրապարակումներում,

6.3. ընդունել սեփական սխալները եւ պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք,

6.4. քաջալերել հանրությանը՝ արտահայտելու ՁԼՄ-ների նկատմամբ իրենց քննադատական վերաբերմունքը, պատրաստ լինել լրագրողական էթիկայի հարցերի շուրջ հասարակության հետ երկխոսության:

Մենք պարտավորվում ենք ընտրությունների եւ հանրաքվեների պաշտոնական քարոզչության ժամանակաշրջանում առաջնորդվել սույն Վարքականոնին կից հավելվածում շարադրված սկզբունքներով:

Մենք՝ սույն Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչներս ընդունում ենք մեր իսկ կողմից ընտրված <u>Դիտորդ մարմնի</u> իրավասությունը՝ քննելու մեր գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը սույն Վարքականոնի դրույթներին եւ պատրաստակամություն ենք հայտնում <u>Դիտորդ մարմնի</u> որոշումը հրապարակելու մեր լրատվամիջոցներում:

Ընդունվել է սույն Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցների եւ լրագրողների հավաքում՝ 2007 թվականի մարտի 10-ին:

Հավելված

ՁԼՄ ղեկավարների եւ լրագրողների Վարքականոնի

Հռչակագիր՝ ընտրությունների եւ հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ

Մենք՝ Վարքականոնը ստորագրած ՁԼՄ ներկայացուցիչներս պարտավորվում ենք ընտրությունների եւ հանրաքվեների պաշտոնական քարոզչության ժամանակաշրջանում առաջնորդվել ստորեւ շարադրված սկզբունքներով.

1. բոլոր կուսակցությունների եւ թեկնածուների նկատմամբ լինել հանդուրժող,

2. չվիրավորել թեկնածուների անձը, չծաղրել նրանց հայացքներն ու տեսակետները,

3. չհրապարակել թեկնածուների հասցեին զրպարտություն, շանտաժ ու սպառնալիք պարունակող նյութեր,

4. բոլոր թեկնածուներին իրենց ծրագրերը եւ տեսակետները ներկայացնելու համար լրատվամիջոցում հավասար հնարավորություն տալ, վճարովի տեղ կամ եթերաժամ հատկացնելիս լրատվամիջոցում ***ապահովել հավասար սակագնային պայմաններ (փոփոխություն՝ Ծաղկաձորում կայացած հավաքում, 10. 11. 2007 թ.),***

5. չհրապարակել քողարկված քաղաքական գովազդ պարունակող նյութեր: Այս կամ այն կուսակցությանը կամ թեկնածուին աջակցող խմբերի կողմից հրապարակման ներկայացված (վճարովի կամ անվճար) կամ նրանց պատվերով պատրաստված նյութերը հստակ առանձնացնել այլ նյութերից կամ այդ մասին նշում կատարել,

6. հեռարձակվող լրատվամիջոցները պետք է ձեռնպահ մնան որեւէ կոնկրետ թեկնածուի կամ կուսակցության աջակցելուց, իսկ տպագիր լրատվամիջոցները նման մտադրություն ունենալու դեպքում այդ մասին նախապես եւ հստակ հայտարարեն:

Մենք ընդունում ենք մեր իսկ կողմից ընտրված Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու ընտրությունների եւ հանրաքվեների պաշտոնական քարոզչության ժամանակաշրջանում մեր գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը սույն հռչակագրի դրույթներին եւ պատրաստակամություն ենք հայտնում Դիտորդ մարմնի որոշումը հրապարակելու մեր լրատվամիջոցներում:

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԿԱԶՄԸ

Ընտրված է ԶԼՄ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների եւ լրագրողական կազմակերպությունների ղեկավարների հավաքում՝ 2007 թվականի մարտի 10-ին:

Հակոբ Ավետիքյան («Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր)
Լեւոն Բարսեղյան (Գյումրիի լրագրողների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ)
Աստղիկ Գեւորգյան (Հայաստանի ժուռնալիստների միության նախագահ)
Էմանուիլ Մկրտչյան («Արմինֆո» լրատվական գործակալության գլխավոր տնօրեն)
Մեսրոպ Մովսեսյան («Մելտեքս» ՍՊԸ նախագահ)
Բորիս Նավասարդյան (Երեւանի մամուլի ակումբի նախագահ)
Լիլիթ Սիմոնյան («Իրավունքի եւ ինֆորմացիայի կենտրոն» ՀԿ նախագահ, իրավաբան)

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

(2007 թվականի մարտ-դեկտեմբեր)

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի առաջին նիստը տեղի ունեցավ 2007 թվականի մայիսի 30-ին: Դիտորդ մարմինը քննարկեց 2007 թվականի մայիսի 12-ին կայացած ՀՀ ԱԺ ընտրությունների քարոզարշավի ժամանակ Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցների գործունեությունը եւ նախանշեց հետագա անելիքները:

Դիտորդ մարմինը որոշեց դիմել 2007 թվականի մայիսի 12-ի ՀՀ ԱԺ ընտրություններին մասնակցած 22 կուսակցություններին եւ 1 դաշինքին՝ պարզելու նրանց գնահատականները, եզրակացությունները, կարծիքները՝ ընտրարշավի ընթացքում լրատվամիջոցների գործունեության վերաբերյալ: Օգտագործելով այդ հարցման արդյունքները, ինչպես նաեւ ԵՄԱ մոնիտորինգի եւ լրատվամիջոցների գործունեության վերաբերյալ միջազգային դիտորդների եզրակացությունները՝ կազմել եւ տարածել եզրակացություն: Որոշվեց, որ եզրակացությունը պետք է պարունակի. ա) ընտրությունների ժամանակ լրատվամիջոցների գործունեության ընդհանուր գնահատականը, բ) հիշեցում հանրությանը՝որ լրատվամիջոցների դեմ իրենց բողոքներով կարող են դիմել Դիտորդ մարմնին, գ) կոչ լրատվամիջոցներին՝ խորհրդարանական ընտրությունների դասերը հաշվի առնելով՝ նախապատրաստվելու 2008 թվականին սպասվող նախագահական ընտրություններին:

Որոշվեց նաեւ՝ կազմակերպել այցելություններ մարզեր՝ ինքնակարգավորման գաղափարը մարզային լրատվամիջոցներին հասցնելու, ինչպես նաեւ տեղական ընթերցողի, ունկնդրի ու հեռուստադիտողի հետ աշխույժ ու անկաշկանդ զրույց անցկացնելու, լրատվամիջոցների դերն ու Դիտորդ մարմնի առաքելությունը ներկայացնելու համար: Այդ նպատակով տեղական հեռուստաընկերություններում կազմակերպել նաեւ հաղորդում-քննարկումներ:

Դիտորդ մարմնի որոշման համաձայն հունիսին անցկացվեց հարցումը:

Հարցման ընթացքում 5 կուսակցությունների ներկայացուցիչներ մեկական օրինակ էին բերել, երբ ընտրություններին վերաբերող նյութերում, կուսակցությունների կարծիքով, ԶԼՄ-ները խախտել են լրագրողական էթիկայի նորմերը: Դրանցից երկուսը վերաբերում էին ինքնակարգավորման նախաձեռնության մեջ ընդգրկված լրատվամիջոցներին. մասնավորապես, Միացյալ ազգային ազատական կուսակցությունից (ՄԻԱԿ) հարցմանը մասնակցած ներկայացուցիչը բողոքել էր, թե Lragir.am ինտերնետային հրատարակությունը կուսակցության ղեկավարի մամուլի ասուլիսի մասին ինֆորմացիայում խախտել էր թեկնածուների նկատմամբ հանդուրժողականության սկզբունքը, իսկ Հայ յեղափոխական դաշնակցության ներկայացուցիչը՝ «Ազգ» օրաթերթի մի հրապարկումը համարել էր գովազդ՝ առանց համապատասխան նշումի: Հունիսին Դիտորդ մարմինը նաեւ երկու բողոք էր ստացել՝ մեկը քաղաքացի Սամվել Մարտիրոսյանից՝ ընդդեմ Հ2 հեռուստաընկերության, մյուսը՝ «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ-ից ընդդեմ «Ազգ» օրաթերթի:

Չորս բողոքները քննարկվեցին Դիտորդ մարմնի 2007 թվականի հուլիսի 4-ի եւ 25-ի նիստերում եւ տրվեցին համապատասխան եզրակացություններ:

Ընդդեմ Lragir.am կայքի հրապարակման ՄԻԱԿ կուսակցության բողոքի առթիվ Դիտորդ մարմինը, ուսումնասիրելով հրապարակումը, էթիկայի կանոնների խախտում չհայտնաբերեց:

ՀՅԴ ներակայացուցիչը նշել էր, թե «Բարգավաճ Հայաստան» կուսակցության քարոզարշավին նվիրված նյութը «Առավոտ» օրաթերթում հրապարկվել էր իբրեւ գովազդ, իսկ «Ազգ» օրաթերթում՝ առանց այդպիսի նշումի: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ խոսքը տարբեր հոդվածների մասին է. «Առավոտում» ԲՀԿ հասարակական կապերի բաժնի պատրաստած գովազդային հոդվածն է, իսկ «Ազգ»-ում՝ թերթի թղթակից Գ. Գեւորգյանի հոդվածը:

Երկու բողոքների վերաբերյալ էր Դիտորդ մարմինն արձանագրեց, որ Վարքականոնի եւ նրան կից Ընտրությունների եւ հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ Հռչակագրի խախտումներ չեն եղել:

(Ընդդեմ Հ2 հեռուստաալիքի Սամվել Մարտիրոսյանի եւ ընդդեմ «Ազգ» օրաթերթի «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ-ի բողոքների մանրամասները եւ Դիտորդ մարմնի եզրակացությունները ներկայացված են սույն բրոշյուրի համապատասխանաբար 17 եւ 19 էջերում):

Դիտորդ մարմինը հավանություն տվեց նաեւ Հայաստանի լրատվամիջոցներում 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների լուսաբանման վերաբերյալ եզրակացության նախագծին: Եզրակացությունը վերջնական տեսքով ընդունվեց Դիտորդ մարմնի սեպտեմբերի 12-ի նիստում ***(եզրակացությունը ներկայացված է սույն բրոշյուրի 15 էջում):***

Հոկտեմբեր ամսին Դիտորդ մարմինը եւս երկու բողոք ստացավ. մեկը ազգագրագետ, ՀՀ կառավարության ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչության պետ Հրանուշ Խառատյանից՝ ընդդեմ մի շարք թերթերի հրապարակումների, այդ թվում՝«Առավոտ» օրաթերթի՝ «Պատիժ՝ ուրիշի խոսքերի՞ համար» հրապարակման, մյուսը՝ քաղաքացի Քնարիկ Մեհրաբյանից՝ ընդդեմ «Առավոտ» օրաթերթում հրապարակված «Մեռածից փող չեն պահանջում. գտնվելով Ուկրաինայում սպանել է Հայաստանո՞ւմ» («Առավոտ» 11. 10. 2007 թ., հեղինակ՝ Ռուզան Մինասյան) հոդվածի:

Երկու բողոքներն էլ ընդգրկվեցին Դիտորդ մարմնի նոյեմբերի 7-ի նիստի օրակարգում: Նիստին հրավիրվել էր նաեւ «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը: Առաջին բողոքի վերաբերյալ նշվեց. տիկին Խառատյանն իր դիմումում անդրադարձել է տարբեր թերթերում հրապարակված հոդվածներին, որոնցում քննարկվում են իր կողմից աճուրդով գնված հացի փռին առնչվող խնդիրները: Դիտորդ մարմինն իրավասու է քննարկել միայն ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած, Վարքականոնը ստորագրած եւ դրանով իսկ Դիտորդ մարմնի լիազորությունն ընդունած լրատվամիջոցների հրապարակումները: Հրանուշ Խառատյանի նշած թերթերից միայն «Առավոտն» է միացել ինքնակարգավորման նախաձեռնությանը: Սակայն հրապարակումներն «Առավոտում» եղել են մեկը՝ 2005 թվականի մայիսի 3-ին, մյուսը՝ 2007 թվականի փետրվարի 28-ին, այսինքն՝ մինչ Վարքականոնը ստորագրելը (10. 03. 2007 թ.): Դիտորդ մարմինը որոշեց չշարունակել բողոքի քննարկումը եւ չքննարկելու մասին վերոհիշյալ հիմնավորմամբ պատասխան ուղարկել Հրանուշ Խառատյանին: Այսուհանդերձ, «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանը պարզաբանեց, որ տիկին Խառատյանի պատասխանն իրենք չեն հրապարակել, քանի որ այն իր ծավալով գերազանցում էր բուն հրապարակմանը 10 անգամ: Դա հակասում է «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ՝ «Հերքման եւ պատասխանի իրավունք» հոդվածի պահանջներին: Ըստ Արամ Աբրահամյանի, իրենք պատրաստ էին հրապարակել Հրանուշ Խառատյանի պատասխանը, եթե հեղինակն այն կրճատեր եւ համապատասխանեցներ օրենքի պահանջներին:

Ընդդեմ «Առավոտ» օրաթերթում հրապարակված «Մեռածից փող չեն պահանջում. գտնվելով Ուկրաինայում սպանել է Հայաստանո՞ւմ» («Առավոտ» 11. 10. 2007 թ., հեղինակ՝ Ռուզան Մինասյան) հոդվածի Քնարիկ Մեհրաբյանի բողոքը քննարկվեց դիտորդ մարմնի երեք նիստերում (նոյեմբերի 7-ին, 12-ին եւ դեկտեմբերի 17-ին): Քննարկումների տարբեր փուլերում Դիտորդ մարմինը լսեց եւ թերթի գլխավոր խմբագիր Արամ Աբրահամյանի, եւ հոդվածի հեղինակ Ռուզան Մինասյանի պարզաբանումները:

Ըստ դիմում-բողոքի հեղինակ Քնարիկ Մեհրաբյանի՝ Ռուզան Մինասյանը հիմնվել է միայն իրենց հարազատների սպանության մեղադրանքով ցմահ ազատազրկման դատապարտված Արարատ Մուրադխանյանի նամակի վրա, չի հանդիպել տուժողների իրավահաջորդներին, ներկա չի եղել դատավարությանը, հետեւաբար՝ միակողմանի է ներկայացրել փաստերը:

Դիտորդ մարմինն արձանագրեց նաեւ, որ մինչ տվյալ բողոքը, տուժող կողմի ներկայացուցիչները, այդ թվում՝ բողոքի հեղինակ Քնարիկ Մեհրաբյանը հրապարակման օրը՝ հոկտեմբերի 11-ին այցելել են խմբագրություն եւ հարձակում գործել լրագրող Ռուզան Մինասյանի վրա՝ նրան պատճառելով մարմնական վնասվածք: Հասկանալով հանդերձ վիշտ տարած մարդկանց հուզական վիճակը՝ Դիտորդ մարմինն անընդունելի համարեց նման գործելակերպը:

Դիտորդ մարմնի անդամները ընդգծեցին նաեւ բողոք-նամակի անպատշաճ բովանդակությունը. այն բազմաթիվ վիրավորական արտահայտություններ էր պարունակում հոդվածագիր Ռուզան Մինասյանի հասցեին: Հաշվի առնելով այդ ամենը, որոշվեց բողոքողին պատասխանել, որ նրանց պահվածքն ու նամակի բովանդակությունը նկատի ունենալով՝ Դիտորդ մարմինը ձեռնպահ է մնում Ռ. Մինասյանի հոդվածի վերաբերյալ եզրակցություն տալուց: Որոշվեց նաեւ «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագրին ուղարկել առանց հրապարակման պահանջի նամակ, որում վերլուծվում էր Ռուզան Մինասյանի հոդվածի համապատասխանությունը Վարքականոնին եւ ներկայացվում էին արձանագրած խախտումները:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՁԼՄ-ՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՁԼՄ-ների Դիտորդ մարմնի 2007 թվականի մայիսի 30-ի նիստի որոշման համաձայն, Երեւանի մամուլի ակումբը խորհրդարանական ընտրություններին մասնակցած 23 կուսակցությունների/դաշինքի շրջանում 2007թ հունիսին անցկացրեց հարցում: Հարցման նպատակն էր՝ պարզել քաղաքական ուժերի գնահատականները, եզրակացությունները, կարծիքները՝ ընտրարշավի ընթացքում լրատվամիջոցների գործունեության վերաբերյալ: Ստորեւ՝ հարցաթերթիկի նմուշը:

Հարցաթերթիկ

Երեւանի մամուլի ակումբը 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին մասնակցած քաղաքական կուսակցությունների շրջանում անց է կացնում հարցում՝պարզելու համար նրանց կարծիքներն ու գնահատականները՝ հայկական ՁԼՄ-ներում ընտրարշավի լուսաբանման վերաբերյալ: Խնդրում ենք պատասխանել ստորեւ ներկայացվող չորս հարցերին: Ձեր կարծիքներն ու գնահատականները կվերլուծվեն եւ կներկայացվեն ՁԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների ղեկավարներին:

1. Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս եք գնահատում ՁԼՄ-ների գործունեությունը 2007-ի խորհրդարանական ընտրությունների շրջանում (ընդգծեք):

- Գերազանց
- Լավ
- Միջակ
- Անբավարար

Հիմնավորեք, խնդրում ենք, Ձեր պատասխանը:

_____
_____
_____
_____
_____
_____
_____

2. Թվարկեք, խնդրում ենք, երեք ՁԼՄ-ներ, որոնք, Ձեր կարծիքով, առավել հաջողությամբ իրականացրին ընտրությունների մասնակիցների մասին ընտրողներին օբյեկտիվ տեղեկացնելու գործառույթը:

ա) _____
բ) _____
գ) _____

3. Թվարկեք, խնդրում ենք, երեք ՁԼՄ-ներ, որոնք, Ձեր կարծիքով, առավել կողմնակալ են լուսաբանել ընտրարշավը:

ա) _____
բ) _____
գ) _____

4. Արձանագրե՞լ եք, արդյոք, ընտրարշավի լուսաբանման ժամանակ լրագրողական էթիկայի նորմերի խախտումներ: Եթե այո, ապա, խնդրում ենք, նկարագրեք նման մի դեպք՝ նշելով ՁԼՄ անվանումը, հոդվածի/սյուժեի վերնագիրը, հրապարակման ամսաթիվը:

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Ըստ ստացված տվյալների միայն մեկ կուսակցություն էր լրատվամիջոցների աշխատանքը գնահատել «գերազանց», 5 կուսակցություն՝ «լավ», 11-ը՝ «միջակ», 6-ը՝ «անբավարար»:

Հարցման ամփոփ արդյունքները ներկայացված են Հայաստանի լրատվամիջոցներում 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների լուսաբանման վերաբերյալ Դիտորդ մարմնի եզրակացության մեջ (էջ 15-16):

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի լրատվամիջոցներում 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների լուսաբանման վերաբերյալ

2007 թվականի մարտի 10-ին ԶԼՄ ինքնակարգավորման ԵՄԱ նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների եւ լրագրողական կազմակերպությունների ղեկավարների հավաքում ընտրված Դիտորդ մարմինը, քննարկելով 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների ընթացքում հայկական լրատվամիջոցների գործունեությունը, հանգել է հետեւյալ եզրակացություններին.

1. 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ արձանագրվել են լրատվամիջոցների գործունեության եւ դրական, եւ բացասական միտումներ: Դրական էր այն, որ այս ընտրարշավը լուսաբանելիս ԶԼՄ-ներն ավելի հազվադեպ էին թույլ տալիս թեկնածուների եւ կուսակցությունների հասցեին վիրավորանքներ կամ պիտակավորում նրանց: Բացասականն էր՝ որ ԶԼՄ-ները կանոնակարգված մոտեցում չունեին ընտրությունների մասնակիցներին եթերաժամանակ (թերթային տարածք) տրամադրելու հարցում. այսինքն՝ լրատվամիջոցների մեծ մասում մեկ թեկնածու կամ կուսակցություն, առանց բավարար հիմնավորման, մի քանի անգամ ավելի շատ լուսաբանում էր ստանում, քան ուրիշները: Ասվածն առաջին հերթին վերաբերում է հեռարձակվող ԶԼՄ-ներին, որոնք չմշակեցին տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներին հաղորդման հրավիրելու հրապարակային ժողովրդավարական կանոններ, հետեւաբար եւ՝ չառաջնորդվեցին այդպիսի կանոններով:

2. 2007 թվականի մարտի 10-ին 18 լրատվամիջոցներ ստորագրեցին միասնական Վարքականոնը (ավելի ուշ դրան միացան եւս երկու լրատվամիջոցներ), որն ուներ հավելված՝ «Հռչակագիր՝ ընտրությունների եւ հանրաքվեների լուսաբանման սկզբունքների վերաբերյալ»: Վարքականոնը ստորագրած լրատվամիջոցները ձգտում էին կատարել այդ Հռչակագրի, ինչպես նաեւ՝ ընտրությունների լուսաբանմանը վերաբերող օրենսդրության պահանջները:

3. Միեւնույն ժամանակ՝ հայաստանյան որեւէ լրատվամիջոցի կողմից ընտրությունների լուսաբանման քաղաքականություն չմշակվեց: Սա հատկապես վերաբերում է հեռուստաընկերություններին, որոնք այդպես էլ նախընտրական միջոցառումների, նախընտրական ժամանակաշրջանում պաշտոնական հանդիպումների, ԱԺ պատգամավորի թեկնածու պաշտոնատար անձանց գործունեության մասին նյութեր պատրաստելու, խորհրդարանում տեղ ստանալուն հավակնող ԶԼՄ սեփականատերերի, ղեկավարների եւ լրագրողների համար եթերի մատչելիության կանոններ չձեւավորեցին: Ընդսմին, հիմքեր կան ենթադրելու, որ շատ հեռարձակվող ԶԼՄ-ներ ղեկավարվում էին գաղտնի ցուցումներով, որոնք մի շարք դեպքերում պայմանավորեցին թեկնածուների եւ կուսակցությունների նկատմամբ կանխակալ վերաբերմունքն ու անհավասար հնարավորությունները: Ըստ էության՝ միայն Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը ուներ կուսակցություններին վճարովի եւ անվճար եթերաժամանակ տրամադրելու գրաֆիկ՝ «ՀՀ Ընտրական օրենսգրքի» պահանջներին համապատասխան հաստատված ՀՀ ԿԸՀ-ի կողմից:

4. Ոչ մի հեռուստաընկերություն քաղաքական գործիչների մասնակցությամբ զվարճալի հեռուստաշոուների արտադրության եւ ցուցադրման սահմանափակում չմտցրեց: Այսինքն՝ քաղաքական որոշ գործիչներ, ընտրարշավի ընթացքում մասնակցելով զվարճալի, ժամանցային հաղորդումներին՝ ընտրողների համակրանքը շահելու լրացուցիչ հնարավորություն էին ունենում եւ դրանով իսկ առավելություն էին ստանում մրցակիցների նկատմամբ:

5. Նախորդ երկու կետերում նշված պատճառներով խախտվում էր բոլոր թեկնածուների եւ կուսակցությունների համար հավասար հնարավորությունների սկզբունքը, առաջանում էին իրավիճակներ, երբ լուրջ հիմքեր կային խոսելու վարչական ռեսուրսի օգտագործման մասին:

6. Դիտորդ մարմնի նախաձեռնությամբ 2007թ հունիսի վերջին հարցում անցկացվեց խորհրդարանական ընտրություններին մասնակցած 23 կուսակցությունների/դաշինքի

շրջանում՝ պարզելու համար նրանց կարծիքներն ու գնահատականները՝ հայկական ԶԼՄ-ներում ընտրարշավի լուսաբանման վերաբերյալ:

Ըստ ստացված տվյալների՝ միայն մեկ կուսակցություն է լրատվամիջոցների աշխատանքը գնահատել «գերազանց», 5 կուսակցություն՝ «լավ», 11-ը՝ «միջակ», 6-ը՝ «անբավարար»: Հարցվողներին նաեւ առաջարկվել էր անվանել 3 լրատվամիջոց, որոնք առավել հաջողությամբ իրականացրին ընտրությունների մասնակիցների մասին ընտրողներին օբյեկտիվ տեղեկացնելու գործառույթը: Այստեղ ցուցակը գլխավորում էին «Առավոտ» օրաթերթը (12 ձայն) եւ «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը (10): Երրորդ տեղը 6-ական ձայնով բաժանում են Հ1-ը, Հայաստանի հանրային ռադիոն եւ «Երկիր մեդիա» ՀԸ-ը: Հարցվողները պետք է նաեւ նշեին 3 ԶԼՄ, որոնք, իրենց կարծիքով, առավել կողմնակալ են լուսաբանել ընտրարշավը: Առավել շատ բացասական գնահատականի արժանացել է «ԱԼՄ» ՀԸ-ը (9 կուսակցություն այդպես է գնահատել), նրան հետեւում է «Հայկական ժամանակ» օրաթերթը (6), 3-րդ տեղում են «Գոլոս Արմենիի» թերթը եւ Հ1-ը (5-ական): Ինքնակարգավորման նախաձեռնության մեջ ընդգրկված ԶԼՄ-ներից 3-ական բացասական գնահատական են ստացել Հ2 հեռուստաալիքը եւ «Առավոտ» օրաթերթը: Հարցման ընթացքում 5 կուսակցությունների ներկայացուցիչներ մեկական օրինակ են բերել, երբ ընտրություններին վերաբերող նյութերում ԶԼՄ-ները խախտել են լրագրողական էթիկայի նորմերը: Դրանցից երկուսը վերաբերում են ինքնակարգավորման նախաձեռնության մեջ ընդգրկված լրատվամիջոցներին՝ Lragir.am կայքին եւ «Ազգ» օրաթերթին: Սակայն Դիտորդ մարմինը, ուսումնասիրելով արված դիտողությունները, երկու դեպքում էլ Վարքականոնի եւ նրան կից Հռչակագրի խախտում չարձանագրեց:

7. Նկատի ունենալով, որ ընդամենը մի քանի ամիս հետո Հայաստանում սպասվում են նախագահական ընտրություններ, Դիտորդ մարմինը կոչ է անում բոլոր ԶԼՄ-ներին՝ մշակել եւ հայտարարել սեփական կանոններ՝ իբրեւ քայլ ինքնակարգավորման արդյունավետ համակարգի ձեւավորման ճանապարհին, եւ ընտրությունների լուսաբանման ընթացքում առաջնորդվել անկողմնակալության եւ անաչառության սկզբունքներով:

Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի
2007 թվականի սեպտեմբերի 12-ի նիստում

ՆԱԽԱԴԵՊ 1

ՊԼԱԳԻԱՏ ՉԻ ԵՂԵԼ

Քաղաքացի Սամվել Մարտիրոսյանը ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին բողոք էր ներկայացրել ընդդեմ Հ2 հեռուստաալիքի: Ըստ Սամվել Մարտիրոսյանի՝ ինքը Հ2 հեռուստաընկերության գեղխորհրդին է տրամադրել «13-րդ վայրկյան» ինտելեկտուալ խաղի նախագիծ: Առաջարկը չի ընդունվել, սակայն ժամանակ անց հեռուստաալիքով սկսել է հեռարձակվել «Օդից փող» խաղը, որում Սամվել Մարտիրոսյանը նկատել է իր առաջարկի նմանակման տարրեր: Բողոքողը ներկայացրել էր նաեւ իր խաղի նկարագրությունը, իր հեղինակային իրավունքների փաստաթղթերը, ինչպես նաեւ իր հեղինակած «Սահմանք իմաստասիրաց» խաղի տպագիր օրինակը, իր կազմակերպած «13-րդ վայրկյան» եւ Հ2-ի «Օդից փող» խաղերի տեսագրությունները ու խնդրում էր եզրակցություն տալ, արդյո՞ք ճիշտ են իր դիտարկումները, որ երկրորդը կարող է առաջինի ծագման հիմք լինել: Այսինքն՝ խնդիրն առնչվում էր ՁԼՄ-ների Վարքականոնի՝ 2.4 կետի՝ «հարգել հեղինակային իրավունքը, բացառել գրագողությունը...» պարտավորությանը:

Հատված Սամվել Մարտիրոսյանի դիմումից

Նկարագրելով իր հեղինակած խաղերը Հ2 հեռուստաընկերություն ներկայացնելու եւ ըստ էության մերժում ստանալու պատմությունը, Ս. Մարտիրոսյանն իր բողոքում այնուհետեւ գրում է.

«...Նայեցի վերջերս Հ2-ի եթերում հայտնված «Օդից փող» խաղը եւ որոշեցի կատարել մի այսպիսի համեմատություն. Հ2-ի «Օդից փող» խաղի մեջ նկատելի են ընդհանրություններ իմ հեղինակած «Սահմանք իմաստասիրաց» եւ «13-րդ վայրկյան» խաղերի հետ: Ահա այդ ընդհանրություններից մի քանիսը.

1. **Նպատակը կամ խաղի թիրախը** - անհայտ ասացվածք,
2. **Հանձնարարությունը խաղի մասնակցին** - ասացվածքի բացահայտում,
3. **Մասնակցին առաջարկվող խաղային տեխնոլոգիան** - Որոշակի ամփոփ միտք կազմելու շարահյուսությամբ օժտված, խառը դասավորված բառեր,
4. Շոու մրցույթում անհայտ բառերը բացահայտելու տեխնոլոգիան՝ մասնակցին թելադրելու նպատակով - «Օդից փող« խաղի դեպքում՝ խառը դասավորված բառերի տառերը ներկայացվում են միանգամից եւ խառը, իսկ «13 վայրկյան» մրցախաղում բառի տառերը բացահայտվում են իրենց տեղում, բայց խառը հերթականությամբ, 13 վայրկյանը մեկ՝ մինչեւ բառի լրիվ հայտնվելը:

... Դիտորդ մարմնից խնդրում եմ ներկայացված նյութերը համեմատել Հ2-ով հեռարձակվող «Օդից փող» հաղորդման տեսագրության հետ եւ փորձագիտական եզրակցություն տալ այն մասին, թե.

1. արդյոք ճի՞շտ են իմ դիտարկած ընդհանրությունները,
2. այդ խաղերում ինչպիսի ընդհանրություններ կարող է մատնանշել Դիտորդ մարմինը,
3. արդյո՞ք այդ խաղերից մեկը չի կարելի դիտարկել որպես մյուսի ծագման հիմք կամ պատճառ»:

ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի եզրակացությունը

Ընդդեմ Հ2 հեռուստաընկերության՝ Սամվել Մարտիրոսյանի բողոքի վերաբերյալ

Քաղաքացի Սամվել Մարտիրոսյանը դիմում էր ներկայացրել ընդդեմ Հ2 հեռուստաալիքի:

Սամվել Մարտիրոսյանը «Հ2» հեռուստաընկերության գեղխորհրդին է ներկայացրել «13-րդ վայրկյան» ինտելեկտուալ խաղի նախագիծ: Առաջարկը չի ընդունվել, սակայն ժամանակ անց հեռուստաալիքով սկսել է հեռարձակվել «Օդից փող» խաղը, որում Ս. Մարտիրոսյանը նկատել է իր առաջարկի նմանակման տարրեր: Ս. Մարտիրոսյանը Դիտորդ մարմնին է ներկայացրել իր խաղի նկարագրությունը, իր հեղինակային իրավունքի փաստաթղթեր, ինչպես նաեւ իր հեղինակած «Սահմանք իմաստասիրաց» խաղի տպագիր օրինակը, իր կազմակերպած «13-րդ վայրկյան» եւ «Հ2»-ի «Օդից փող» խաղերի տեսագրությունները եւ խնդրել՝ եզրակցություն տալ, արդյո՞ք ճիշտ են իր դիտարկումները, որ երկրորդը կարող է առաջինի ծագման հիմք լինել:

Դիտորդ մարմինը քննարկեց Սամվել Մարտիրոսյանի «Սահմանք իմաստասիրաց» խաղի տպագիր օրինակը, դիտեց «13-րդ վայրկյան» եւ «Հ2» հեռուստաալիքով հեռարձակվող «Օդից փող» խաղերի տեսագրությունները, եւ եզրակացրեց, որ խաղերի միակ ընդհանրությունը գաղտնագրված ասացվածքի բացահայտումն է, ինչը Դիտորդ մարմնին բավարար հիմք չի տալիս եզրակացնելու, թե խաղերից մեկը կարող է մյուսի ծագման հիմք կամ պատճառ լինել:

Միաժամանակ, Դիտորդ մարմինը համարում է, որ Սամվել Մարտիրոսյանի անցկացրած «13-րդ վայրկյան» խաղը բավականին հետաքրքիր է, եւ նրա նախագիծը հաջողությամբ կարող է իրականացվել ինչպես «Հ2»-ում, այնպես էլ որեւէ այլ հեռուստաալիքում:

Ընդունվել է Դիտորդ մարմնի 2007 թվականի հուլիսի 4-ի նիստում

.

ՆԱԽԱԴԵՊ 2

ԿՐՈՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԸ ԼՈՒՍԱԲԱՆԵԼԻՍ ԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ՆՐԲԱՆԿԱՏ ԼԻՆԻ

Հուլիսի 4-ին ՁԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին էր դիմել «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» հասարակական կազմակերպության ղեկավար Ստեփան Դանիելյանը՝ բողոքելով «Ազգ» օրաթերթում, իրենց կազմակերպության մոնիտորինգի արդյունքում հայտնաբերված կրոնական անհանդուրժողականության դրսեւորումների դեմ: Մասնավորապես, թերթի հոդվածներից մեկը, որը վերաբերում էր «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ-ի կազմակերպած՝ «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց առաքելական եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքի նախագծի քննարկումներին, թերթը վերնագրել էր «Աղանդավորներն ու գլոբալիստները հայ ազգային եկեղեցու դեմ»: Այսպիսով, ըստ բողոքը ներկայացնողի, քննարկման բոլոր մասնակիցները որակվել են աղանդավորներ եւ գլոբալիստներ. «կարող ենք ներկայացնել մասնակիցների ցանկը,- նշված էր Ստեփան Դանիելյանի դիմումում,- եւ պարզ կլինի, որ քննարկմանը մասնակցողների մեծ մասը կապ չունի կրոնական կազմակերպությունների հետ, իսկ գլոբալիստ են, թե ոչ՝ միայն մասնակիցներից յուրաքանչյուրը կարող է որակել իր հայացքները»: Երեք հրապարակումներ վերաբերել են Հայ ավետարանական եկեղեցուն եւ մասնավորապես նրա առաջնորդ, վերապատվելի Ռընե Լեւոնյանին: Ընդ որում, ըստ բողոքը ներկայացնողի, Հայ ավետարանական եկեղեցու եւ նրա ղեկավարի հասցեին վիրավորանքներից զատ, այդ հոդվածներում եղել են նաեւ չստուգված փաստեր:

Ըստ էության բողոքն առնչվում էր 2007 թվականի մարտի 10-ին ընդունված Վարքականոնի՝ 5.1 կետով նախատեսված՝ որոշակի խմբերի նկատմամբ նախապաշարված վերաբերմունքից խուսափելու եւ 5.2 կետով նախատեսված՝ կրոնական թշնամանք չքարոզելու պարտավորությունների խախտմանը:

Հատվածներ «Ազգ» օրաթերթում հրապարակված հոդվածներից

ԱՂԱՆԴԱՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳԼՈԲԱԼԻՍՏՆԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՄ

«Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց առաքելական եկեղեցու հարաբերությունների մասին» օրենքի երեք էջանոց նախագիծը (հեղ.՝ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյան) Բաց հասարակության ինստիտուտի տրամադրած միջոցների շնորհիվ երեկ քննարկման եւ տարբեր կարծիքների արտահայտման առիթ դարձավ «Անի» հյուրանոցի սրահներից մեկում: Ըստ Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոնի տնօրեն Ստեփան Դանիելյանի, որը նաեւ քննարկման կազմակերպիչն էր, օրենքի նախագիծը «խնդիրներ է առաջացնում հենց առաջին իսկ տողերից»: Մասնավորապես, բանախոսին բավականին անհանգստացրել էր, որ ՀՀ-ն ճանաչում է Հայ եկեղեցու «բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում»: «Եթե սա գրվեր անցյալ ժամանակով, ինչ-որ տեղ կարելի էր ընդունել, բայց երբ ներկայի եւ ապագայի համար է ընդունված, որոշակի խտրականություն է մյուս եկեղեցիների նկատմամբ», ասաց բանախոսը: Նրա խոսքերով, «կիսապետական» կարգավիճակի ապահովության ձգտող եկեղեցին պետք է իր ինքնավարությունից որոշակի զիջում անի պետությանը:

Բանախոսին զայրացրել էր նաեւ այն դրույթը, թե երեխաները պետք է դպրոցում Հայ եկեղեցու պատմություն ուսումնասիրեն՝ կասկածելով դրանում նաեւ դավանանքի պարտադրում, որ ըստ էության անհիմն է, քանի որ վերոհիշյալ դասընթացի դասագրքերը պատմություն եւ բարոյական նորմերի մասին են բարբառում եւ ոչ թե դավանաբանական տարբերությունների քարոզ են: Ի դեպ, վերջինս, բազմաթիվ ծնողների եւ ուսուցիչների կարծիքով, խիստ տեղին կլիներ երեխաներին աղանդավորական որոգայթներից պաշտպանելու համար: Չգիտես ինչու, բանախոսը, որ այդքան մտահոգ էր երեխաների կրոնական

դաստիարակության բազմազանությամբ, չհիշատակեց այն ուսուցիչներին, որոնց հոգեորսության պատճառով բազմաթիվ երեխաներ ինքնասպանության փորձեր են արել, վերջին դեպքն էլ 3 օր առաջ է տեղի ունեցել Լոռու մարզի Զրաշեն գյուղում:

«Ազգ», 03. 02. 2007 թ.

ՄԻ՛ ՍՏԻՐ
Հատկապես երբ ոտքերդ լեզվիցդ կարճ են

... ուշագրավ մի սուտ, որի մասին պարզաբանումներ ստացանք տեղյակ աղբյուրներից: Հայաստանի ավետարանական եկեղեցու առաջնորդ վերապատվելի Ռընե Լեւոնյանը վերոհիշյալ քննարկմանը այնպիսի ինքնավստահ ելույթ ունեցավ, որ ունկնդիրներն ակամա հավատացին նրան եւ լռությամբ ի գիտություն ընդունեցին նրա՝ քաջատեղյակ թվացող մարդու խոսքը: Ահա Ռընե Լեւոնյանի խոսքի համառոտ բովանդակությունից մի հատված: Նա հիշեց, որ վերջին օրերին Թուրքիայում էր՝ մասնակցելու Հրանտ Դինքի հուղարկավորությանը, քանի որ Դինքը իրենց եկեղեցու անդամ էր: Երբ ինքը խոսք ասաց Հրանտ Դինքի գերեզմանին, քանի որ գնացել էր որպես իրենց եկեղեցու ներկայացուցիչ, հնչեցրեց այսպիսի միտք. «Ես հպարտ եմ, որ հայ եմ, ինչպես եւ Դինքը»: Գալով այս նախագծին, վերապատվելին ասաց. «Սա առիթ է, որ ըսեմ՝ հպարտ չեմ: Ամոթ է, որ այսպիսի փաստաթուղթ ներկայացվի: Ես կցանկանայի, որ ԱԺ-ն հետ վերցնի այս նախագիծը: Մենք կցանկանայինք նոր օրենք «Խղճի ազատության եւ կրոնական փոքրամասնությունների մասին»: Ռ. Լեւոնյանը խորհուրդ տվեց չշտապել եւ միանգամից նոր օրենք ընդունելու մասին մտածել: Իհարկե, մենք եւս շատ կցանկանայինք հավատալ բանախոսի անկեղծությանը եւ նրա՝ Մայր աթոռը ավելի հզորացած տեսնելու երազանքի իսկությանը, եթե չլիներ Ռ. Լեւոնյանի բերած օրինակի անպատեհ մանրամասնը: Նա ցանկացավ, այնուամենայնիվ, շեշտել, թե Դինքն էլ է ավետարանական, եւ ինքն էլ՝ որպես հովիվ մեկնել էր նրա հուղարկավորությանը մասնակցելու եւ որ ոչ պակաս կարեւոր է՝ Դինքի գերեզմանին խոսք է ասել: Ի դեպ, Դինքի հուղարկավորությանը ներկա եղողները փաստում են, որ նրա ելույթը բավականին երկար ու անպատեհ է եղել, որի համար նույնիսկ ակնարկ է եղել՝ կարճ կապեք: Սակայն այս փաստը չխանգարեց Ռ. Լեւոնյանին հիշատակել այդ ելույթի մասին բոլորովին անտեղի եւ «իմիջիայլոց»: Անշուշտ վարքի ոչ պատշաճ դրսեւորում է եւ հանուն գաղափարախոսության, ոչ թե եկեղեցական պատկանելության զոհված հայորդու անվան շահարկում՝ ինքնագովազդի նպատակով: Սակայն հարց է ծագում, որքանով է ինքնագովազդն արտացոլում երեւույթի իրական պատկերը...

... Մեկ այլ տեսակետ, որ Ռ. Լեւոնյանը հնչեցրեց դպրոցներում հայ եկեղեցու պատմություն առարկայի դասավանդման մասին: Նախ՝ այն այլ բանախոսներ որակեցին որպես ուսմունքի դասավանդում, իսկ Ռ. Լեւոնյանն իր հերթին շեշտեց. «Մենք կըսենք՝ որեւէ եկեղեցի ազատ է իր դավանանքը դասավանդելու երեխաներին»: Նա առաջարկեց դրա համար ֆակուլտատիվ դասաժամեր առանձնացնել: Սրանով ենթադրելի է, որ մե՛կ եկեղեցու միասնականության, նաեւ առաքելական եւ ավետարանական եկեղեցիների սերտ բարեկամության մասին ճառերը առնվազն փուչիկ են այն իրական համոզվածության առջեւ, որ կարճ ձեւակերպվում է այսպես՝ վերապատվելին ասում է մի բան, մտածում՝ ճիշտ հակառակը: Իսկ սա ոչ այլ ինչ է, քան կրոնական հատվածականության տարածում մատաղ սերնդի շարքերում:

«Ազգ», 09. 02. 2007 թ.

ՀԵՐՁՎԱԾ «ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ»

... Եթե որոշ աղանդներ Հայաստան ներխուժեցին մեր եկեղեցու նկատմամբ ակնհայտ թշնամանքով (ինչպես, ասենք, Եհովայի վկաները, որոնք հետզհետե փոխում են մարտավարությունը), ավելի խելացիները թափանցեցին աննկատ՝ ձեւանալով բարեկամ եւ հավատակից: Դրանցից ամենավտանգավորները ամենից «խաղաղարարներն» են, որոնք թափանցում են աննկատ, անաղմուկ, բարեկամ եւ համախոհ են ձեւանում ու քայքայում են ներսից:

...Այս հոդվածում կուզենայինք անդրադառնալ մի չհայտարարված պատերազմի, մերկացնել կեղծ բարեկամի եւ գաղտնի հակառակորդի թշնամական մտադրությունները, մեր լուման ներդնել նրանց բացահայտման գործում՝ ձգտելով, որպեսզի մեր եկեղեցին սրանց եւս դասի իր հակառակորդների շարքը: Աղանդներին նվիրված մեր հոդվածաշարը հենց այս մտայնությամբ էլ սկսում ենք մեր պատկերացմամբ ամենավտանգավոր աղանդից, աղանդ, որը թերեւս բոլորից

շատ հոգիներ է առեւանգել մեր եկեղեցուց: Խոսքը, այսպես կոչված, «քույր»՝ հայ ավետարանական եկեղեցու մասին է:

... Սրանք ամեն կերպ փորձում են ցույց տալ, թե դրսից չեն ֆինանսավորվում, որովհետեւ եթե մայր կազմակերպությունը արտերկրում է գտնվում, նման կազմակերպության գործունեությունը հետապնդվում է Հայաստանի օրենքով, բայց միեւնույն ժամանակ հսկայական գումարներ են ծախսում տպագրության եւ քարոզչության վրա, իսկ վերջերս երեւանցիները զարմանքով տեսան, որ ԱՄՆ նախկին դեսպանատան շենքի վրա գրված է «Հայ ավետարանական ընկերություն»: Դե, իհարկե, գերգաղտնի օբյեկտը ամերիկացիները հայ ավետարանականներին տրամադրել են զուտ մարդասիրական իդեալներից ելնելով, բնականաբար ԱՄՆ գաղտնի ծառայությունների եւ հայ ավետարանականների միջեւ որեւէ կապ չկա եւ չի կարող լինել, եւ դեսպանատան նախկին շենքը հայ ավետարանականներին հանձնելով ԱՄՆ-ը, իհարկե, չի փորձում հասկացնել մեր ղեկավարությանը, որ այդ կազմակերպությունը գտնվում է իր առանձնակի հովանավորության ներքո, որ նրան պետք է քաղցր աչքով նայել: Սակայն պարզ է նաեւ մեկ այլ բան. եթե այդ վերջին՝ արդեն բացահայտ եւ արդեն ոչ թե միայն մեր եկեղեցուն, այլեւ պետությանը նետված մարտահրավերից հետո մեր ազգային անվտանգության համապատասխան վարչությունը լրջագույնս չզբաղվի հայ ավետարանական միության գործունեության ուսումնասիրմամբ, ապա միգուցե իմաստ ունի այդ վարչությունը լուծել մեկ այլ «ազգանվեր գործի»:

... Հայ ավետարանականների քույր-եղբայր խաղն արդեն անհամացել է եւ հնդկական կինո է հիշեցնում, որտեղ քույրն ու եղբայրը ճանաչում են իրար խալով:

Խմբ. կողմից.-Ի տարբերություն հոդվածագրի բացարձակ գնահատականների, հաստատեմ, որ պատմական պայմանների բերումով մեր Մայր եկեղեցուց բաժանված հայ բողոքական համայնքում, ի մասնավորի Միջին Արեւելքի երկրներում, կան ազգային ոգով տոգորված, կրոնախոհությամբ չտառապող բազմաթիվ մտավորականներ ու գործիչներ, ովքեր թերթեր են հրատարակում, դպրոցներ ու համալսարան են պահում, եւ հայ առաքելականներից ոչ պակաս նվիրված են հայապահպանության գործին ու հայ արժեքներին: Ի դեպ, նրանցից շատերն են դժգոհ Հայաստանում վերապատվելի Ռ. Լեւոնյանի գործունեությունից:

«Ազգ», 15. 05. 2007 թ.

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի եզրակացությունը

Ընդդեմ «Ազգ» օրաթերթի «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ-ի դիմումի վերաբերյալ

Դիտորդ մարմինը, քննարկելով ընդդեմ «Ազգ» օրաթերթի «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ դիմումը՝ թերթի 2007 թվականի փետրվարի 9-ի համարի «Մի' ստիր, հատկապես երբ ոտքերդ լեզվիցդ կարճ են», 2007 թվականի փետրվարի 22-ի համարի՝ «Սպանության շահարկումը անկախ Դինքի դավանանքից նողկալի արարք է», 2007 թվականի մայիսի 15-ի համարի՝ «Հերձված «Ավետարանական» եւ 2007 թվականի փետրվարի 3-ի «Աղանդավորներն ու գլոբալիստները ազգային եկեղեցու դեմ» հոդվածներում կրոնական անհանդուրժողականություն սերմանելու, ինչպես նաեւ կանխամտածված սուտ տեղեկությունների վերաբերյալ, ԶԼՄ-ների Դիտորդ մարմինը եզրակացնում է.

Յուրաքանչյուր մասնավոր հրատարակություն կարող է ունենալ իր ուղղվածությունը եւ արտահայտել խմբագրական տեսակետը՝ հասարակական ցանկացած խնդրի վերաբերյալ: Այս առումով ընդունելի է կրոնական թեմատիկայի վերաբերյալ «Ազգ» օրաթերթի ուղղվածությունը եւ այն հետեւողականորեն լուսաբանելը, սակայն թերթը փաստերը ներկայացնելիս եւ որակումներ տալիս (նման թեմաների դեպքում առավել եւս) պետք է մեծ նրբանկատություն ցուցաբերի:

Այսպես՝

1. 2007 թվականի փետրվարի 2-ին կայացած «Հայաստանի Հանրապետության եւ Հայաստանյայց առաքելական եկեղեցու հարաբերությունների մասին» օրինագծի հասարակական քննարկմանը վերաբերող՝ «Աղանդավորներն ու գլոբալիստները ազգային

եկեղեցու դեմ» հոդվածը («Ազգ» 03.02.2007) օբյեկտիվորեն չէր արտացոլում քննարկման ընդհանուր մթնոլորտը: Հաշվի չէր առնված, որ դրան մասնակցում էին տարբեր մոտեցումներ եւ հայացքներ ունեցող կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք հիմքեր ունեին իրենց վիրավորված զգալու թերթի կատեգորիկ գնահատականներից:

2. «Մի' ստիր, հատկապես երբ ոտքերդ լեզվիցդ կարճ են» հոդվածը («Ազգ», 9 փետրվարի 2007 թ.) պարունակում է կտրուկ գնահատականներ, ինչի համար բավարար հիմքեր չկան: «Հերձված «Ավետարանական» հոդվածը («Ազգ», 15 մայիսի 2007 թ.) ամբողջությամբ Հայ Ավետարանական եկեղեցու դեմ է ուղղված եւ կրոնական անհանդուրժողականությունից զատ ոչ ստույգ տեղեկություն է պարունակում, թե ԱՄՆ դեսպանատան շենքը հանձնվել է Հայ ավետարանականներին, այն դեպքում, երբ շենքը գնվել է աճուրդով:

3. Վերոհիշյալ, ինչպես նաեւ՝ դիմումատուի բողոքում մեջբերված՝ թերթի այլ պնդումները առանձին վերցրած կարող էին ընդունելի լինել որպես զուտ լրագրողական դիտարկումներ կամ եզրակացություն, սակայն ամբողջության մեջ դրանք նախապաշարված վերաբերմունքի տպավորություն են թողնում:

4. Հարգելով «Ազգ» թերթի՝ կրոնական թեմատիկային անդրադառնալու եւ սեփական տեսակետները ներկայացնելու իրավունքը, Դիտորդ մարմինը հարկ է համարում հիշեցնել 2007 թվականի մարտի 10-ին ընդունված Վարքականոնի 5.1 եւ 5.2 կետերը.

« 5.1. խուսափել մարդկանց հանդեպ նախապաշարված վերաբերմունքից՝ նրանց ցեղային, սեռային, տարիքային, կրոնական, ազգային, աշխարհագրական պատկանելության, սեռական կողմնորոշման, ֆիզիկական արատների, արտաքինի կամ սոցիալական կարգավիճակի պատճառով,

5.2. որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն, որեւէ ձեւով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք եւ անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական եւ լեզվական հայտանիշներով խտրականություն»,

ինչպես նաեւ՝ 6.1 եւ 6.2 կետերը՝

«6.1. աջակցել կարծիքների ազատ փոխանակմանը, անկախ նրանից, որ այդ կարծիքները կարող են տարբերվել խմբագրական տեսակետներից,

6.2. պատրաստակամ լինել հանդիպելու եւ պատասխանի հնարավորություն ընձեռելու այն անձանց, ում հասցեին մեղադրանքներ են եղել հրապարակումներում»:

Ընդունվել է ՁԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի
2007 թվականի սեպտեմբերի 12-ի նիստում